

չունի քրիստոնէական հաւատքի հետ, միսն ու արիւնն նշանակութիւն չունին երիշքի արքայութեան մէջ:

ԲՈՒՌՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

ԳԾՐՄԱՆԻԱ.

Լութերի անձնապահութեան խնդիր է այժմ գերմանական կաթոլիկ և բողոքական թերթերի մէջ, Մի կաթոլիկ քահանայ Կլայստուով վնրջերս մի տետր հրատարակեց, ուր կամենում է ապացուցանել, որ Լութերն անձնասպան է եղել. բոլոր փաստաբանութիւնն հիմնած է այն տեղեկութեան վրայ, որ Լութերի մահուանից 70 տարի յետոյ մի ճիզվութ հաղորդել է. Դրա ասելով Լութերի ծառան կաթոլիկ է դարձել և ապա իրեն խոստովանութիւն յայտնել, որ իւր տէրն յուսահատութիւնից անձնասպան է եղել. Իոլոր այս պատմութիւնը մի նմանաբանութիւն է, Յուդայի պատմութիւն և ծընունդ կաթոլիկ կղերի մոքի, Ժամանակակից անձանց վկայաբանութեամբ Լութերը բնական մահով է մեռել և այս փաստն ընդունում են բանհմաց կաթոլիկներն ես, որոնցից շատերն խիստ դատապարտում են Կլայսին:

—Կրօնական—ընկերավարական շարժումներն արգութեամբ աճում են Գերմանիայում, որի հետևանքներից շատ երկիւղ են կրօնմ պահպաղականները:

—Քեռլինում Սեպտ. 18-ին մի մեծ ժողով է տեղի ունեցել բազար յայտնելու համար ընդէմ Տաճկաստանի, որ անմեղ հայ քրիստոնեաներին հալածումէ, Ժողովին ներկայ են եղել 2000 անձից աւելի, որոնց թուումն եղել են և հայեր ու հայուհիք. Ժողովի վեկավարներն են եղել պատոր Ֆարէր, Լեպսիուս, Խելիս Ակրներ, պրոֆ. Թումայեան Դոկտոր Լեպսիուսը, որ հռչակաւոր պրոֆեսոր Լեպսիուսի որդին է, անձամբ Փաքր Աստիայ ուղևորուել և ստուգել տաճկական գաղանութիւններն. Այս ուղևորութեան ժամանակ ձեռք բերած փաստերը նա հրատարակել է պահպաղականների բերան. Ուայսբուէ, թերթում և ապա գրքով կովականի Լեպսիուսի գըրածների Հիւս. Գերմ. թերթը թըրական գետպահանից ստացած հերթումներով հանդէս էր եղել, ուստի և ժողովն իւր զայրայթն յայտնեց այդ մեջ. մի առաջնական գործ է այն տեսակետից, որ քաղաքական շահեր չունենաւ ըստ արդի առաջնորդութիւն է. Յորա հեղինակի կարծիքով ամեն պետութիւն պարտաւոր է միայն իւր հպատակներին հովանաւորել և ուրեմն ամեն հարց վերջանում է նորանով, որ հայերը գերմանական հպատակներ չեն. Քոլոր ազգերի քրիստոնեայի համայնքը պետք է աղօթէ հայերի կրած նեղութեան համար և օգնէ նոցաւ բայց որ և է ազգի աշխարհ հական պետութիւնը ոչինչ գործ չունի

—Հեռագիրն արգէն հաղորդեց, որ պրուսական ոստիկանութիւնը պրոփ. Թումայեանցին վանդել է Գերմանիայից, որ յօգուտ հայերի քարոզութիւններ չանէ. Այսպէս Բարմէն քաղաքում տեղի ունեցած ժողովի պատճառով պատասխանութեան է հրատիրուած մի գերմանացի հայաւեր ևս այս առմիւ «Ապահովութէն», գրումէ. «O armes Deutsehes Reich!» (ոչ խելչ գերմանական պետութիւն),

—Զուցիցերիայում կազմուած հայոց օժանդակող ընկերութեան նման ընկերութիւններ են կազմուել և Գերմանիայում գրանց հրատարակած հրաւերին ստորագրել են 600 աւելի անձինք զանազան դասակարգերից, որոնց մէջ աչքի են ընկույմ նշանաւոր պատորները, պալատական քարոզիչներ և գիտականներ, Ահա այդ հրաւերն:

«Քոլոր քրիստոնէութեան աչքի առաջ վերջին 10 ամսուան ընթացքում տաճկական հայաստանում 100.000 անզէն քրիստոնեայք են մորթուել. 2500 գիւղեր կողոպտուել և աւերուել են, 563 եկեղեցիք և 77 վանքեր են կողոպտուել և աւերուել, 646 քրիստոնեայ գիւղեր բռնի մահմետականացուել, 328 եկեղեցիք մզկթի փոխարկուել, 170 հայ քահանայք և 21 բողոքական քարոզիչներ հրաժարուելով իսլամն ընդունել մորթուել են...

Ս. Ք.

Christliche Welt-ի 31 հառաջ են բերուած երկու նամակներ՝ Խմբագրի Պետութիւնների քաղաքական առմադիւ, որոնք Արարատ նախորդ համարից ծանօթ են ընթերցողնն. Ա. նամակի իմաստն է, թէ ինչպէս դատարանը պատժում է այն ծնօղներին, որոնք շարաչար են վարուում իրենց որդիների հետ, այնպէս էլ պետութիւնները պարտաւոր են Տաճկաստանին պատասխանատութեան ենթարկել՝ գէպի իւր հպատակները ցոյց տուած անդմութիւնների համար և թէ Գերմանիայի պարտականութիւնն աւելի մեծ է այն տեսակետից, որ քաղաքական շահեր չունենաւ ըստ արդի առաջնորդութիւն է. Յորա հեղինակի կարծիքով ամեն պետութիւն պարտաւոր է միայն իւր հպատակներին հովանաւորել և ուրեմն ամեն հարց վերջանում է նորանով, որ հայերը գերմանական հպատակներ չեն. Քոլոր ազգերի քրիստոնեայի համայնքը պետք է աղօթէ հայերի կրած նեղութեան համար և օգնէ նոցաւ բայց որ և է ազգի աշխարհ հական պետութիւնը ոչինչ գործ չունի

հայկական արհաւիրքների հետո։ Առաջի ական աստօւածաբանը չի քաշուում նոյն խսկ իւր մի բարեկամ հարուստ վաճառականի խօսքը յիշելու, որով հայերն իրեւ ամենայեանեալ մրուը են ներկայանում, շատ աւելի գաա քան թուրքերը։ որովհետև (՝) նորա խաղաղ ժամանակում ել իրենց առածը չեն վերագրանում։ Եթէ քաղաքակիրթ Եւրոպայում բարոյական հասկացողութիւնն այն աստիճանի այլանդակուել է, որ այսպիսի կարծիքներ առանց ամաչելու յայտնել կարելի է և քրիստոնէութեան անունով նոցա ջատագովոզներ գտնել՝ զարմանալի չէ, որ քաղաքագիտական շրջանները շարունակում են հայոց տառապանքների վերայ անտարբերութեամբ նայել և արեան նորանոր հեղեղների հոսելը կարծես բնական ու իրաւացի բան է նոցա համար, Խմբագիրն ուղղակի պատասխանել վերջին նամակագրին աւելորդ է համարում։ բայց կողմանակի ազգու խօսքերով ցոյց է տալիս նորա կարծիքների անհեթեթու միջները։

Տաճկի գատի պաշտպան ընդգէմ հայերի հանդիսացել է վերջերս երիտասարդ բուսաբան Պ. Զիհէ, որ գիտական նպատակներով փոքր Ասիա եկած Կիլիկիոյ ափերից ուսումնասիրել է բոլոր հայերի միամակը, եղել է մինչև խսկ Սոսում և իմացել որ այդտեղ մի կաթողիկոս է նստում և կրօգումի ու Կ. Պոլսի կաթողիկոսների հետ մէկ տեղ հայ կաթողիկ եկեղեցւոյ բարձրագոյն հոգեուրականութիւնը ներկայացնում։, և ահա իւր այդ ամենասույգ ծանօթութիւնները հրատարակել է մի շարք յօդուածներով ուր հաւատացնում։ Եթէ քրիստոնեայ եկեղեցները ոչ մի տեղ այնքան ազատ չեն, որքան տաճկական իշխանութեան ներքոյ, և թէ հայերի իրենց կրօնի պատճառաւ հաւատուելու վրայը ցնորը է։

Christliche Welt-ի 35 հ.-ում այս առթիւ մի համառօտ յօդուած է գրել հոչակաւոր արարագէտ պրոֆ. Սոցին, ուր պատմական փաստերով ցոյց է տալիս, թէ ինչպիսի աւերիչ ազգեցւութիւն են ունեցել և անբարոյական քաղաքականութիւն գործ գրել տաճիկներն անցեալում; իրենց երեան դալու օրից սկսած, և թէ ինչպիս կրօնական անխառութիւնը նոցա կառավարած երկներում լոկ խօսք է եղել միշտ և է. ուստի զարմանում է, որ տախափի մի պետութեան վերայ գեռ էլի այնչափ շատ հիացողներ կան։

Խելքը իմբագիր Ռադէն 34 հ.-ում ուշադրութիւն է հրաւիրում թէ Զիհէի, և թէ մանաւանդ դորա հակառակ Պատոր Գր. Լեպսիւսի յօդուածների վերայ, որ բաւական ժամանակ Փոքր Ասի-

այի խորքերում՝ Անգորայի և Ագանայի նահանգներում, մնալուց և կատարուած եղելութիւններին ի մօտոյ ծանօթանալուց յետոյ, սորերս հայրենիք է վերագրաձել և իւր տպաւորութիւնները հրատարակում է Reichsbote ազգեցիկ թերթի մէջ։ Այդ լուրջ և միանգամայն անկողմակալ յօդուածներն մեծ ազգեցութիւն են գործել և ահագին շարժում յառաջ բերել. խսկ Լեպսիւս անտենագիր է ընտրուել օգոստոսի 16-ին Քրանկֆուրտում երկրորդ անգամ գումարուած «Պաշն օգնութեան հայաստանի համար» ընկերութեան, որին մասնակցում են այժմ բազմաթիւ առաջնակարգ անձնիք և նոցա թիւն որստորէ աճում է և գործունեութիւնը զօրանում շնայած կառավարութեան հանած արգելքներին։ Մի առանձին տետրոց ևս հրատարակել է նա իւր ունեցած տեղեկութիւնները։ Ռադէն յիշատակելով նորա առաջն յօդուածը և Frankfurter Zeitung թերթից լուրեր քաղելով Վանի սարսափելի կոտորածների մասին, ամենավստահելի վկայութիւններով և անհեթեթի փաստերով ապացուցուած է ցոյց տալիս հետեւեալ կէտերը։

«Ա. Հայաստանի կոտորածները, որոնց մօտ 100.000 հայեր զահ են գնացել և որոնց հետև անքն է եղել գրեթէ 2.500 գիտերի բոլորովին կողապտուիին ու կենդանի մնացածների կիսով չափ բռնի կրօնափիս լինելը, ուրիշ ոչինչ են, եթէ ոչ տաճկական կառավարութեան ու, որ իրագործուելով քրիստոնէից մի ահաելի (գուցէ բոլոր ժամանակ եղածների մէջ ամենամեծ) հալածանքի կերպարանք է ընդունել։

Բ. Այդ կարգագրութիւնը, որի նշանաբանը կ. Պոլսի կերպոնական վարչութիւնն է սուել և որի կատարման կրաւորական կամ ներգործական կերպով աջակցել է զօրքը և սոսիկանութիւնը, նպատակ ուներ պետութիւնների երկարատև ձնշման ներքոյ, Սուլթանի բուռն գիմարգութեան հակառակ, ընդունել տուած բարենորոգութեանը ծրագիրն անիրագործելի գարձնել։

Գ. 800.000 հոգուց բաղկացած մի քրիստոնեայ ժողովուրդ ջարգելու բոլորովին կողապտելու և բռնի կրօնափիս անելու պատասխանատուութիւնն ընկում է անմիջապէս (եւրոպական) պետութիւնների քաջանակ քաջանակ տականութեան վերայ գեռ էլի այնչափ շատ հիացողներ կան։ Դնինը 100.000 հայերի արեամբ վճարել տալուց յետոյ, այժմ անմեղութեամբ լոււանում են ձեռքերը կամ մեզն իրար վրայ ձգում։ Եթէ քրիստոնէական պետութիւնները Հայաստանից ձեռք քա-

շած լինեն), այսօր ևս այնտեղ թէւ վիճակը գեղցիկ չէր լինի—որովհետև տաճիկ պաշտօնեաների զեղծումները և քիւրդ աղաների բռնութիւնը տարիներէ ի վեր գրեթէ անտանելի էին գարձրել Հայերի կացութիւնը—բայց գոնէ չէին փորձի Հայաստանի քրիստոնեայ ազգաբնակութիւնը արեան ծովի մէջ խեղդելու և հազարաւոր գիւղեր ու քաղաքներ կողապելով ու բռնի կրօնափոխ անելով քրիստոնեութեան անունը վերացնելու այդ աշխարհից։ Այն ամենը, ինչ որ եւրոպական լրագիրներում գրուել է Հայերի ապստամբութեան և անգլիական գործակալների խռովարար ու գրգռիչ ազգեցութեան մասին՝ տաճիկաց սուտերի գործարաններից է եւել, տաճիկ գեսպանութեան արժոււն հսկողութեան ներքոյ հարիւրաւոր կեղծ լուրեր ու տեղեկադիմներ մատակարարելով հեռագրական գործակալութիւններին ու համաշխարհային թերթերին՝ գոհացումն տալու համար Եւրոպայի պահանջներին, որ կատարուած անուրանալի եղելութիւնների պատճառն էր հայցնում։ Եթէ քրիստոնեայ մեծ պետութիւնները իրենց համակրութեամբ բաղդաւորեցնէին Տաճկաստանի այս նահանգները, որոնց բնակչիներն առաւելապէս յոյներ են՝ կոտորածները ճիշդ նոյն եղանակով յունական նահանգներում տեղի կռնենային։ Խոկ մահմեդական գաղափարներով բոլորովին իրաւացի կը լինէր այդ, որովհետև իսլամի օրէնքը թոյլ չէ կարող տալ երբէք, որ վեհափառ Սուլթանի մահմեդական և քրիստոնեայ հպատակներն հաւասար իրաւանց տէր լինին։ Եյդ պատճառաւ տասն և ութ տարիներէ ի վեր Հայաստանի համար խոստացուած բարենորոգումները, քանի որ այդ գաւառների աւերմամբ նոքա իրօք անիրադեմ են գարձեն՝ թղթի վերայ կմնան, թէւ Սուլթանը նոցա գործադրելու համար պատույ խօսք է տուել. խոկ պետութիւնների կողմից Սուլթանի հետ նոր յայտագրեր փոխանակելը հայկական հարցի մասին մի անվայել խաղ է, մանաւանդ երբ տաճիկ պաշտօնեաների մինչև երկինք բողոքով եղեռնագործութիւնները Հայաստանում անպատիմ են մնացել մինչև այժմ և կմնան։ Օսմաննեան պետութեան անբարեկարգելի լինելը վաղուց ապացուցուած է....

Ուրիշ միջոց չէ մնում, բայց եթէ պետութիւններն իրենց վերայ առնեն ինամակալութեան բոլոր պատասխանատուութիւնը, որ նոքա արգէն գործ են գնում Թիւրքիայի վերաբերմամբ։



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

Խ Ա Զ Ի Ն Ե Բ Ք Ո Յ

Գիշերուան այս սեւ ահոելի խասար Զմանանէնէ թող քնզ, իմ եղբայր։ Վառ աւտաքեր օրուայ է նշան։ Այդ արշալուաի ընկերն անգաման

Ձե՞ս տեսել, ինչպէս մոհյլ վողթորկին Յաջորում է միշտ լուսագեղ երկին, եւ քաղցր ժպտով արեւը պայծառ գգուստ է կրկին սար, դաշտ ու անտառ ...

Խաշիդ սակ Ծնշուած զարծեալ դու յուան— Փրկութեան քո ժամ անշուշտ պիտի զայ. Արեամբ ներկուսաւ առաջ գողգոթան, Ապա թէ ծագմց սովոր օդն յարութեան։

8. ՅՈՒԱՆՆԻԿԱՆ

